Ա. ՏԱՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ Հ. ՂԵՎՈՆԴ ՏԱՅԱՆ

Սիյուռքում հանրածանոթ, սակայն հայրենիքում սակավ ծանոթ է ս. Ղազարի բազմավաստակ վանականի այս անունը։ Հ. Ղևոնդ Տայանը իր ամբողջ կյանքը նվիրել է հայ եկեղեցական երաժշտությանը։ Ավելի քան 60 տարի մխիթարյան այս պատկառելի վանականը եղել է «մեր հոգևոր սքանչելի երաժշտության» զմայլելի կատարողը, խորաղնին ուսումնասիրողը և օտարներին ծանոթացնողը։ Հայ իրականության մեջ մեր հոգևոր երգը կատարողներ ունեցել է ոչ քիչ, մասնակի ուսումնասիրողներ ունեցել է ոչ շատ, իսկ մեր հոգևոր երգի հմայքը և հմայքի գաղտնիքները եվրոպական ձայնագրությամբ և տեսական լայն վերլուծությամբ օտարներին բացահայտող եղել է ոչ ոք։ Այս վերջին պարագան է, որ Հ. Ղևոնդ Տայանի դերը դարձնում է բացառիկ՝ հայ իրականության մեջ։

Դեռ երիտասարդ հասակում իր ձայնական հարուստ տվյալներով գրավելով ս. Ղազարի աբբահայր Իգնատիոս Կյուրեղյանի ուշադրությունը, Հ. Ղևոնդ Տայանը ուղարկվում է Հռոմ՝ տեղի կոնսերվատորիայում ուսանելու։ 1911—1914 թվականներին աշակերտելով իտալացի հռչակավոր երաժշտագետներ Պերոլիին, Ռնֆիչեին և Կազիմիրիին, ավարտում է Հռոմի երաժշտանոցը, կատարելագործելով իր երաժշտական դիտելիքները։ Վերադառնալով ս. Ղազար, Հ. Ղևոնդ Տայանը նվիրվում է հայ եկեղեցական երաժշտության և մասնավորապես շարականների հին խազերի ուսումնասիրության, միաժամանակ իր առինքնող ձայնով շարունակելով զարդը հանդիսանալ հանդիսավոր պատարագների, հատկապես Ավագ շաբաթվա, Ծաղկազարդի և Զրօրհնեքի հոգեպարար արարողություններին։ Հ. Ղևոնդ Տայանը արդեն խորապես տիրացած հայ սրբազան երգի առանձնահատկություններին և եվրոպական ձայնագրության, որոշում է իրագործել այն, ինչ եղել էր իր սևեռամտածումը՝ օտարներին հաղորդակից դարձնել հայ հոգևոր երաժշտության զմայլելի մեղեդիներին՝ իրենց ձայնային հարստությամբ և ներքին բովանդակությամբ։ 1916 թ. գործի լծվելով և 25 տարվա ջանադիր աշխատանք թափելով, մխիթարյան վանականը եվրոպական ձայնագրության է վերածում ամբողջ հայ Շարակնոցը, Տաղարանը, Մաշտոցը, իր բոլոր ձեռագրածը ընդգրկելով 2500 մեծադիր էջերի մեջ[1]։

Բայց եվրոպական ձայնանիշները իր վիճակի չէին ներկայացնելու հայ սրբազան երգի բոլոր հմայքներն ու գաղտնիքները։ Եվ ահա Հ. Ղևոնդ Տայանին հարկ եղավ հնարել քառորդաձայն նոտաներ՝ իրենց անվանումներով— monesis, triesis—bemollet, bemollon Ձայնանիշների այս նոր սիստեմը հայտնություն եղավ եվրոպական շրջանակներում և ընդունվեց միջազգային համեմատական ցուցատախտակների մեջ՝ „Système Dayan“ անունով։ Այս հայտնությունը եղավ 1933-ին, երբ Հ. Ղևոնդ Տայանը առաջին անգամ եվրոպական ձայնագրությամբ հրատարակեց մի նմուշ հայ եկեղեցական երաժշտությունից. հրատարակված նմուշը Ավագ ուրբաթի Համբարձին էր—«Եկայք հաւատացեալք»-ը ստեղի, ուր հայերեն և ֆրանսերեն լեզուներով հարակից մի ուսումնասիրությամբ հեղինակը պարզած էր նաև իր նորահնար ձայնանիշների դրությունը։

[1] «Բազմավեպ», 1956, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 282։

Այս նմուշի հրապարակումից գրեթե 20 տարի անց, 1952 թվից, հ. Ղևոնդը աղգային շրջանակների նյութական և բարոյական աջակցությամբ սկսում է պրակներով, հատոր առ հատոր հրատարակել իր բազմամյա և տքնաջան աշխատանքի պտուղն ու պսակը՝ Հայաստանյայց Եկեղեցու ամբողջ Շարակնոցը եվրոպական նոտագրությամբ։ Բայց հատորները հրատարակում է ոչ ըստ հերթականության, այլ ըստ կարևորության։ Առաջինը հրատարակում է չորրորդ հատորը՝ պրակներով, որոնք պարունակում են Ավագ շաբաթի շարականները, որոնց հեղինակներն են. ս. Սահակն ու ս. Ներսես Շնորհալին։ Ապա հրատարակում է հինգերորդ հատորը՝ դարձյալ պրակներով, որոնք բովանդակում են Զատիկից մինչև Հոգեգալուստ շրջանի շարականները։ Այս երկու ծավալուն, ավելի քան 900 էջ կազմող հատորները տալիս են հայ հոգևոր բազմաձայն երաժշտության բովանդակ պատկերը։ Այնուհետև, հաջորդաբար հրատարակվում են Շարակնոցի մյուս հատորները կազմող պրակները։ Հրատարակելի է մնում միայն հայ սրբազան երգի պատմությանն ու տեսությանը նվիրված ներածական հատորը հայերեն և ֆրանսերեն լեզուներով, որի ձեռագիրն արդեն ավարտված է[2]։

Այսպիսով, քաղաքակիրթ աշխարհը հ. Ղևոնդ Տայանի շնորհիվ այժմ հնարավորություն կունենա լիովին ճանաչելու և ճաշակելու հայ Շարակնոցի հոգեթով մեղեդիները։

1947 թվականի աշնանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի երաժշտական բաժնի վարիչ, պրոֆեսոր Քուշնարյանի ղեկավարությամբ մի պատվիրակություն գիտա-հետազոտական նպատակով այցելելով ս. Ղազար և ծանոթանալով հ. Ղևոնդ Տայանի երկարամյա և արդյունաշատ գործունեությանը, բարձր է գնահատում նրա մատուցած ծառայությունը հայ երաժշտական մշակույթին։ Վերադառնալով հայրենիք, պրոֆեսոր Քուշնարյանը հ. Ղևոնդին ուղղել է հետևյալ նամակը.

«Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի ողջույնի նամակը առ արժանահարգ հայր Ղևոնդ վարդապետ Տայան.

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ներկայացուցիչները 1946 թվականին այցելեցին ս. Ղազար կղզում վենետիկյան Մխիթարյանց միաբանությունը։ Նրանք ջերմ ընդունելություն գտան այնտեղ, և միաբանությունը մեծ աջակցություն ցույց տվեց նրանց գիտա-հետազոտական աշխատանքում։ Մեր ներկայացուցիչների՝ Երևան վերադարձին ես լսեցի, որ Դուք երաժշտական ասպարեզում մեծ մասնագետ եք և երկարամյա արդյունավետ աշխատանքով ստեղծագործել եք բազմաթիվ երկեր-շարականներ։ Հատկապես ուրախությամբ իմացա, որ այդ երգերը ձայնագրելու համար Դուք եվրոպական նոթագրությանը լրացուցիչ ձայնանիշներ եք հնարել և այդ ասպարեզում մեծ տեսական աշխատանք եք տանում։

Գիտությունների Ակադեմիայի երաժշտության պատմության և տեսականի սեկտորը, որի վերակացուն եմ ես, ներկայումս հատուկ ուշադրություն է դարձնում հայկական եկեղեցական երաժշտության, նրա զանազան սեռերի, նույնպես և եկեղեցական հին նոթագրության ուսումնասիրությանը։

Մեր այս սեկտորի առանձին աշխատակիցներ պարապում են շարականների, տաղերի, մեղեդիների կոմպոզիցիոն ձևերի հետազոտությամբ. ուրիշներ ուսումնասիրում են Դ-ձայների առանձնահատկությունները. աշխատակիցների մի երրորդ խումբ զբաղված է հին խաղերի վերծանման խնդրով, և այլն։ Ամեն մի նոր տվյալ բոլոր հիշյալ ասպարեզներում, հատկապես խազագիտության ասպարեզում, մեզ չափազանց հետաքրքրում է։

Մեզ համար խիստ շահեկան կլիներ ծանոթանալ Ձեր երաժշտական կոմպոզիցիաների հետ։

Փորձերի փոխանակության կարգով՝ մեր կողմից պատրաստ ենք ուղարկել Ձեզ Հայաստանում հրատարակվող բոլոր երաժշտական և երաժշտագիտական նյութերը։

Վստահ ենք, որ մեր դիմումը ջերմ ընդունելություն կգտնի Ձեր կողմից, և հետագայում մեր միջև կապը կամրապնդվի հանուն մեր հայրենիքի և մեր ժողովրդի երաժշտական կուլտուրայի ծաղկման։

Ի նշան իր հարգանքի Ձեզ և երաժշտական ասպարեզում Ձեր բեղմնավոր գործունեության՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երաժշտության պատմության ու տեսականի սեկտորը մատուցում է Ձեզ Սպենդիարովի երկերի հավաքածուի առաջին հատորը։

Հարգանքներով՝ Ա. ՔՈՒՇՆԱՐՅԱՆ

27 նոյեմբերի 1947

Երևան— Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երաժշտության պատմության ու տեսականի սեկտոր՝ պրոֆեսոր Քուշնարյան»[3]։

[2] Այսպես էր մեզ տեղեկագրել ս. Ղազարի միաբանության ընդհանուր քարտուղար հ. Ներսես Տեր-Ներսեսյանը 1966 թ. հոկտեմբեր 26 թվակիր նամակով։

[3] «Բազմավեպ», 1948 թ., մարտ—ապրիլ (№ 3—4), էջ 88։

Հ. Ղևոնդ Տայանը դեռ երիտասարդ հասակում նամակագրական կապ է ունեցել Կոմիտաս վարդապետի հետ, որը նույնպես բարձր է գնահատել մխիթարյան երիտասարդ վարդապետի բնատուր ձիրքերը։ 1915 թ. տարագրության ժամանակ, երբ Կոմիտասը թրքական բանտում հուզումով երգում էր «Տէր ողորմեա»-ն, աքսորակից բժշկապետ Վահրամ Թորգոմյանը հարցնում է Կոմիտասին, թե հայոց մեջ ո՞վ կա իրեն հետևող, Կոմիտաս վարդապետը պատասխանում է. «Վենետիկի մեջ կա Հ. Ղևոնդը. սոխակի ձայն ունի, կարի երաժշտությունը. նա կարող է մեծ երաժիշտ մը ըլլալ և Ս. Ղազարի հանդարտ մթնոլորտին մեջ մշակել հայկական երաժշտությունը»[1]։

Կոմիտասը իրավունք ուներ։ Այսօր Հ. Ղևոնդ Տայանը իր երաժշտագիտական հմտությամբ մեծ հեղինակություն է վայելում ոչ միայն հայ ազգային կյանքում, այլև միջազգային երաժշտագիտական շրջանակներում։ Իբրև ճանաչված հեղինակություն, նա հրավիրվել է հայ երգի ու երաժշտության մասին հոդվածներ գրելու երեք իտալական և երկու գերմանական հանրագիտարաններում, և չորս անգամ (1942, 1950, 1954 և 1956)՝ մասնակցելու երաժշտագիտական միջազգային համաժողովներին Հռոմում և Վիեննայում, ուր հանդես է եկել հայ աշխարհիկ և հոգևոր երաժշտության մասին հմտալից բանախոսություններով։ Վերջին անգամ, 1956 թվին, իր 73 տարեկան պատկառելի հասակին, իբրև հրավիրյալ, իր մասնակցությունն է բերել Մոցարտի ծննդյան 200-ամյակի առթիվ Վիեննայում գումարված միջազգային երաժշտագիտական համաժողովին, ուր ունկնդիրների գնահատանքին արժանացած իր բանախոսության մեջ պարզում է քառորդ ձայների իր սիստեմը և նրանց կիրառումը հայ հոգևոր երաժշտության մեջ։

Հ. Ղևոնդ Տայանը, բացի շարականներից, հորինել է բազմաթիվ հայրենասիրական երգեր, որոնցից երկուսը՝ Նարեկացիին և Ալիշանին նվիրված, ինչպես նաև միաձայն ու բազմաձայն քայլերգեր։ Երգի է վերածել Ալիշանի «Հայոց աշխարհիկ» և «Հայ հանճար» քերթվածները։ Հիշատակության արժանի է նաև «Պատարագ»-ը, որ մխիթարյան հայրը հորինել է ս. Ղազարի ավանդական եղանակների հիման վրա։

Հ. Ղևոնդ Տայանը իր երաժշտական ըզաղումներին զուգընթաց, օգտաշատ գործունեություն է ունեցել նաև մշակութային այլ մարզերում։

Երիտասարդ վանականի մշակութային գործունեությունն սկսվում է բանասիրական մի աշխատությամբ, որ հրատարակվում է 1911 թ. «Եղիշեի չորս եղանակները հնագույն գրչագրի մը մեջ» խորագրով։ 1915—1921 թվերին նվիրվել է ուսուցչության ս. Ղազարում և Հռոմում։ 1921—1926 թվերին նշանակվել է խմբագրապետ «Բազմավեպ»-ի, ուր հրապարակել է մի շարք ծավալուն հոդվածներ՝ նվիրված Դանթեի մահվան 600-ամյակին, Նապոլեոն Ա-ի մահվան 100-ամյակին, Բայրոնի մահվան 100-ամյակին և Ալիշանի մահվան 25-ամյակին։

1923 թվականին Հ. Ղևոնդը լույս է ընծայում՝ առաջին աշխարհամարտի հետևանքով դադարած «Բազմավեպ»-ի միացյալ համարը, որը նվիրվում է Հանդեսի հիմնադրման 80-ամյակին։ Այդ նույն շրջանում Հ. Ղևոնդը «Բազմավեպ»-ում հրատարակում է ս. Ղազարի «Մայր դիվանը», այսինքն ս. Ղազարում պահված այն բոլոր վավերաթղթերը, որոնք վերաբերում են 1707—1773 շրջանին։ Հետագայում, 1930-ին, այդ վավերաթղթերը հրատարակվեցին առանձին հատորով, իբրև առաջին մաս «Մայր դիվան»-ի։ Հաջորդ մասերը մնացել են անտիպ։ 1933—1936 թվերին Հ. Ղևոնդը ս. Ղազարում դարձյալ նվիրվում է կրթական ասպարեզին, իսկ 1936—1946 թվականներին վանքի ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է միաբանության ատենապետ։ 1946 թվականից մինչև այսօր պատկառելի վանականը, այլ պարտականություններից ազատ, բացառապես զբաղվել է երաժշտական գործերով։

Ներկայումս Հ. Ղևոնդ Տայանը, հասակով և վաստակով բեռնավոր, հանդիսանում է սփյուռքում և օտար շրջաններում ամենահմուտ և ամենահեղինակավոր մասնագետը հայ երաժշտության ընդհանրապես և հայ հոգևոր երաժշտության մասնավորապես։

Հ. Ղևոնդ Տայանի հմտության վերջին և վավերական վկայությունը կլինի հայ Շարակնոցին նվիրված պատմական, տեսական և վերլուծական այն ընդարձակ ուսումնասիրությունը հայերեն և ֆրանսերեն լեզուներով, որ կազմելու է իր հրապարակած բազմահատոր աշխատության ներածական հատորը, որի շուտափույթ լույս ընծայումը փափագն է բոլոր նրանց, որոնք ուզում են վերահասու լինել «մեր հոգևոր սքանչելի երաժշտության» զարգացման փուլերին և հմայքի գաղտնիքներին։

[1] «Բազմավեպ», 1956, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 282։